*թար խանն ընդ նմա և իբրև խմբեցան ի պատերազմ, տեսեալ Քիմիանուշին զզօրսն Թաթարաց՝ թուլացաւ անձն նորա և յետս փախեաւ, զոր տեսեալ Տաճկաց՝ հասեալ նմա և սպանին և սուր եդեալ ի վերայ Մաճարաց անխնայաբար կոտորեցին զնոսա և գերի վարեցին զընակիչս գաւառին ոչ պակաս քան զանցեալ ամին, զոր արարին աւար և կոտորած: Եւ ասացին՝ Ի բերդ առեալ ի նոցանէ, որ մուտն էր Յուլիսի:*

*Որ և ի հնգլին Եշի[1]) հողմ ելանէր, և զայեխ մի ի գնալն Ղուրշունլի կոչեցեալ մաղազայ՝ ընկղմէր ի ծով և արս Գ տաճիկ ծովահեղձ լինէր:*

*Եւ այգուցն (6 Յ••-լ•) ևս հայ ումն անկեալ ի ծով նաւակէն և մեռեալ ի խորս:*

*Իսկ ի հասանել ԺԳ-ի Յուլիսի Շաբաթի աւուր(*) եղև կրակն մեծ ի Ստամպօլ. բարով չէր եղեր:*

*Շաբաթի աւուր եկեալ Շապան աղա Ղափուճուլար քէհասի յէտրէնու և եկն եմուտ ի պաղատ արքունի և երեր խէթիշէրիֆ յարքայէ, և կոչեալ ի ներքս ի պաղատ զՏապաղ կոչեցեալ Մէհէմէտ փաշա և խեղդամահ արար: Պատճառ ասացին՝ թէ կին նորին արզ գրէ առ արքայ թէ Այսքան տեղեաւ և այսքան կործանեցաւ քաղաքդ, և տէր ոչ գոյ զի պահէին. վասն որոյ նախանձեալ վէզիրին զայն արար, քանզի և յաւուրն այնմիկ Տապաղն բազումս տանջեցաւ ի վերայ հրոյն ի տեղիս տեղիս: Այլ և մազուլ արարին զՍուլէյման փաշա և եդին ղայմախամ զԻւսուֆ փաշա, որ երբեմն կին ունէր զսուլթան զօճա Քէնանին: Լուլինէր այսու եթէ յամենայն տեղիս հրակիզէին՝ ի Պոլին Անդրիանու, ի Պէլէս Պէլիկրատու և ի Սելանիկ*

1) Դշի.

---

(*) **Լուս.** *կրակն է:*